«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԲՄ-ի ձևերի կիրառումը տարրական դպրոցում
ԱՌԱՐԿԱ	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Նունե Խաչատրյան
ՄԱՐԶ	ք. Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Երևանի հ. 179 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....3
1. Բազմաբնույթ մտածողության տեսություն.....4
2. ԲՄ-ի առավելությունները և կիրառումը տարրական դպրոցում.....11
Եզրակացություն.....14
Օգտագործված գրականության ցանկ.....16
Հավելված 1.....17
Հավելված 2.....18

Ներածություն

Բազմաբնույթ մտածողության «ԲՄ» տեսությունը իր կարևոր տեղը ունի ժամանակակից մանկավարժական կրթության մեջ: Բազմաբնույթ մտածողությունը ամբողջությամբ ներկայացրել է ԱՄՆ-ի Հարվարդի համալսարանի հոգեբանության և մանկավարժության ֆակուլտետի պրոֆեսոր Հորվարդ Գարդները: Հովարդ Գարդների՝ բազմաբնույթ մտածողության տեսությունն առաջարկում է, որ ոչ թե աշակերտը հարմարվի առաջարկվող ուսուցման կաղապարին, այլ ուսուցման գործընթացը հարմարեցվի յուրաքանչյուր աշակերտի ուսումնառության հնարավորություններին և յուրահատկություններին:

Հետազոտության նպատակն է՝

Բացահայտել ԲՄ-ի կիրառման անհրաժեշտությունը և արդյունավետությունը ուսուցման ընթացքում:

Հետազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել Հովարդ Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը
- ներկայացնել մտածողության հիմնական ձևերը
- կարևորել ուսուցման ընթացքում բազմաբնույթ մտածողության տեսակների կիրառումը տարրական դպրոցում
- առանձնացնել աշակերտի, ուսուցիչների և դպրոցի համար ԲՄ-ի առավելությունները
- բացահայտել ԲՄ-ի տեսության հիմնական դրույթները

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից օգտագործված գրականության ցանկից, հավելվածից:

1.Բազմաբնույթ մտածողության տեսություն

Բազմաբնույթ մտածողության տեսությունը ձևավորվել է 20-րդ դարի 80-ական թվականներին և ամբողջությամբ ներկայացվել է 1983թ.-ին հրապարակված «Գիտակցության կառուցվածքը» գրքում: Հովարդ Գարդների բազմաբնույթ մտածողության տեսությունը շատ արագ լայն տարածում գտավ և այսօր կիրառվում է աշխարհի գրեթե բոլոր երկրներում:

Իր տեսությունն անվանելու համար Գարդները օգտագործել է «Intelligence» եզրույթը, որի առավել հարմար հայերեն համարժեք են համարել «մտածողություն» բառը:

ԲՄ-ի տեսությունը ձևավորվել է որպես հոգեբանական տեսություն մտքի մասին: Այն քննադատում է գոյություն ունեցող այն պատկերացումը, ըստ որի մարդիկ ծնվում են՝ ունենալով միայն մեկ «մտածողություն» («օժտվածություն», «հնարավորություն»), որը կյանքի ընթացքում փոփոխության չի ենթարկվում: Այս տեսությունը ներկայացնում է մի շարք գիտական, հոգեբանական ուսումնասիրություններ՝ ապացուցելու համար ճիշտ հակառակը: Ըստ Հորվարդ Գարդների՝ յուրաքանչյուր ոք կարող է զարգացնել իր բոլոր մտածողությունները.

- Կենսաբանական միջավայրով, որը ներառում է ժառանգական գործոնը, մտավոր կամ ֆիզիկական վնասվածքները ծնունդից առաջ, ընթացքում կամ հետո:
- Անձնական կենսափորձով, որը ներառում է ծնողների, ուսուցիչների, ընկերների և հասակակիցների հետ շփվելու հետևանքով ձեռք բերած փորձը:
- Մշակութային և պատմական միջավայրով, որը ներառում է անհատի միջավայրի մշակութային և պատմական զարգացման տարբեր նախադրյալները՝ այն ժամանակն ու տեղը, ուր նա ծնվել, դաստիարակվել և զարգացել է:

«Չափազանց կարևոր է ճանաչել մարդու բոլոր մտածողությունները և դրանց զուգորդման տեսակները,- գրում է Հ. Գարդները: - Մենք իրարից այսքան տարբեր ենք հիմնականում այն պատճառով, որ ունենք մտածողությունների զանազան զուգորդումներ: Եթե մենք կարողանանք ճանաչել դրանք, ապա հնարավորություն կունենանք լուծել այն հիմնախնդիրները, որոնք ծառացած են մեր առջև»:

Ըստ Գարդների մտածողության հիմնական ձևերը 7-ն են.

1. Լեզվական/խոսքային
2. Տրամաբանական-մաթեմատիկական
3. Տեսողական-տարածական
4. Մարմնաշարժողական
5. Երաժշտական
6. Միջանձնային
7. Ներանձնային

Լեզվական/խոսքային մտածողությունը ենթադրում է խոսքը, լեզուն (ինչպես մայրենի, այնպես էլ օտար)՝որպես միտք արտահայտելու ինչպես նաև որպես ուրիշներին հասկանալու և հաղորդակցվելու միջոց կիրառելու կարողություն: Վերջինս դրսևորվում է լեզուն և խոսքը որպես զգացմունքները, գաղափարներն ու մտքերն արտահայտելու և հաղորդակցվելու միջոց օգտագործելու ձևով (ինչպես գրավոր՝ լրագրողներ, գրողներ, բանաստեղծներ, այպես էլ բանավոր՝ դիվանագետներ, քաղաքական գործիչներ, ասմունքողներ և այլն):

Տեսողական-տարածական մտածողությունը ենթադրում է երևույթների զննական ընկալում և զննական գաղափարներով կառավարվելու կարողություն: Նման մտածողություն ունեցողների համար հեշտ է իրենց զննական գաղափարները սխեմաների, դիագրամների միջոցով ներկայացնելը (օրինակ՝ նկարիչները, դիզայներները, ճարտարապետները, փորձագետ գիտնականները, փորձարկողները և այլն):

Տրամաբանական-մաթեմատիկական մտածողությունը ենթադրում է տրամաբանական մտածողության, թվերի առավել արդյունավետ օգտագործման, խնդիրների գիտական լուծման և իրերի ու գաղափարների միջև եղած կապերն ընկալելու կարողություն (օրինակ՝ մաթեմատիկոսներն ու գիտնականները):

Երաժշտական մտածողությունը ենթադրում է բազմապիսի երաժշտական ձևերի համապատասխան կիրառում, երաժշտությունը որպես արտահայտման միջոցի օգտագործում: Երաժշտական մտածողությամբ օժտված մարդիկ զգայուն են ռիթմի, մեղեդու, հարմոնիայի և այլնի նկատմամբ/օրինակ՝ երգիչները, երաժիշտներն ու երգահանները:

Մարմնաշարժողական մտածողությունը ենթադրում է սեփական մարմնի օգնությամբ կամ իր պատրաստած առարկաների միջոցով իմաստի արտահայտման, զանազան իրեր կառուցելու, ստեղծելու կարողություն. (օրինակ՝ պարողները, դերասանները, մարզիկները, քանդակագործները, վիրաբույժները, մեխանիկներն ու արհեստավորները):

Միջանձնային մտածողությունը ենթադրում է ուրիշ մարդկանց հետ արդյունավետ շփման և նրանց զգացմունքները հասկանալու կարողություն (օրինակ՝ առևտրականներ, սպասարկման ոլորտի սոցիալական աշխատողներ):

Ներանձնային մտածողությունը ենթադրում է ինքնաճանաչման կարողություններ՝ ներառյալ սեփական մտորումները, վարքի դրդապատճառները, նպատակները, զգացմունքներն

ու գաղափարները և դրանց հիման վրա նոր մտքեր կառուցելու, նոր գաղափարներ զարգացնելու կարողություն:

Հետագայում ևս երեք մտածողություն Գարդները ավելացրեց իր տեսության մեջ, դրանք են.

1.Բնագիտական 2.Իրական/առարկայական 3.Հոգևոր

Բնագիտական մտածողությունը հնարավորություն է ստեղծում բնության տարրերը տեսնել փոխկապակցության մեջ: Կիրառելով մտածողության այս ձևը՝ երեխաները կարող են ստույգ տեղեկություններ կազմել արտաքին (բնական, կենդանական, տիեզերական) աշխարհի մասին: Տեսնելով և լսելով պատմություններ կենդանիների կամ երևույթների մասին՝ նրանք մեծ հետաքրքրություն են ցուցաբերում այնպիսի առարկաների նկատմամբ, ինչպիսիք են կենսաբանությունը, կենդանաբանությունը, բուսաբանությունը, օդերևութաբանությունը, աստղագիտությունը:

Հոգևոր մտածողությունը՝ ի հակադրություն բնական աշխարհի, պարտադրում է առաջ քաշել հոգևոր աշխարհը և առկա բացերով լրացնել բնական աշխարհը: Հոգու մասին խոսելիս օգտագործվում են հոգևոր զգացմունք կամ կրոնական օժտվածություն եզրույթները, որոնք հակադրվում են գիտությանը և չեն օգտագործվում ակադեմիական աշխարհում: Մեզանից շատերը մարդու մեջ ճանաչում են մարմինը, գիտակցությունը, բայց ոչ հոգին:

Իրական/առարկայական մտածողությունը ինքն իրեն հեռավոր տիեզերական աշխարհի հետ կապի մեջ տեսնելու կարողություն է այնպես, ինչպես զգացմունքները՝ արվեստի աշխարհում: Եվ քանի որ մարդկությունն այս արժեքները ճանաչել է իր զարգացման բոլոր աստիճաններում, ուստի մտածողության այս ձևի կազմակերպումն ու զարգացումն անհրաժեշտ են երեխաներին՝ կյանքում ճիշտ կողմնորոշվելու համար:



Այս մտածողությունները ըստ Գարդների հնարավոր չէ սահմանափակել այսքանով, դրանք կարող են հասնել 7-ից 700-ի, բայց նա փորձել է ընդգրկել առավել ընդհանուր մտածողությունները:

Հովարդ Գարդների առաջարկած մոտեցումների մեջ առաջին հայացքից չկա ոչ մի բացարձակ նորույթ: Սրանք, կարելի է ասել, այն հիմնաքարերն են, որոնց վրա հնուց ի վեր կառուցվել է ամբողջ ուսուցման գործընթացը: Պարզապես Գարդները կարողացել է ի մի բերել և համակարգել այն ամենը, ինչ ստեղծվել է դարերի ընթացքում:

Ըստ Գարդների՝ մարդու մտածողությունը բնութագրվում է որպես՝

- ✓ իրական կյանքում հանդիպող խնդիրներ լուծելու կարողությունների հանրագումար,
- ✓ հասարակական արժեք ներկայացնող արտադրանք կամ ծառայություն ստեղծելու կարողություն,
- ✓ հիմնախնդիրներն ընկալելու կամ ձևակերպելու կարողություն, ինչն առաջ է բերում նոր գիտելիքների տիրապետման անհրաժեշտություն:

Փաստորեն դրանք բոլորն էլ այն խնդիրներն են, որոնք դրվում են կրթության ոլորտում գործիմաց մոտեցման հիմքում:

Հովարդ Գարդների առաջարկած մոտեցումների մեջ առաջին հայացքից չկա ոչ մի բացարձակ նորույթ: Սրանք, կարելի է ասել այն հիմնաքարերն են, որոնց վրա կառուցվել է ամբողջ ուսուցման գործընթացը:

Բազմաբնույթ մտածողության տեսության մեջ Հովարդ Գարդները կարողացել է ի մի բերել և համակարգել այն ամենը, ինչ ստեղծվել է դարերի ընթացքում: Այս տեսության մեջ շաղախվել են 20-րդ դարի նշանավոր մանկավարժներ Ռ. Շտայների, Լ. Վիգոդսկու, Ժ. Դյուիի, Ա. Մասլոուի և այլոց գաղափարները: Ավելին, հավանաբար սկսած անտիկ, նույնիսկ ավելի վաղ շրջանից մինչև այսօր դժվար է մանկավարժության պատմության մեջ գտնել որևէ անուն, որի հայացքներում այս կամ այն կերպ չեն արտահայտվել այս գաղափարները:

Հ. Գարդների զարգացրած տեսության առավելությունն այն է, որ նա ոչ միայն ի մի բերել այն, ինչ ստեղծվել է համաշխարհային հոգեբանամանկավարժական մտքի կողմից, այլև կարողացել է այդ ամենը տեսնել կուռ համակարգի մեջ և տալ տեսության խոր, գիտական, հոգեբանամանկավարժական հիմնավորում:

Գարդների ԲՄ տեսության շնորհիվ այսօր մենք կարող ենք ոչ միայն առավել արդյունավետ և դյուրին լուծել ուսուցման, գիտելիքների հաղորդման, դրանք գործնական, կյանքում կիրառելի դարձնելու հարցերը, այլև հասնել մեր առջև ծառացած ուսումնական առավել բարդ և արդական հարցերի լուծմանը, այն է՝ ձևավորել ստեղծագործական մտածողություն, խթանել երեխաների ակտիվությունը, սովորել սովորեցնել, ինչպես նաև ապագա ուսուցիչներին «սովորել սովորեցնել», ձևավորել առաջադրված խնդիրների լուծման համար համագործակցելու կարողություններ (միջանձնային մտածողություն) և իմաստավորել իրենց սեփական մտքերն ու հույզերը՝ որպես գիտելիքի, տեղեկությունների աղբյուր (ներանձնային մտածողություն):

ԲՄ-ի ուսուցման սկզբունքները՝ ըստ Քեյթ Ռոջերսի

- Մտածողությունը եզակի չէ, այն բազմաբնույթ է:
- Յուրաքանչյուր անձ ունի մտածողության իր սեփական, բացառիկ կառույցը:
- Մարդու մտածողությանը հատուկ ձևերը և տեսակները մշտապես գտնվում են զարգացման և փոփոխության մեջ (փոփոխվում են մտածողությունները և փոփոխություններ պարտադրում):
- Մտածողության բոլոր տեսակներն ունեն շարժուն (դինամիկ) բնույթ:
- Բազմաբնույթ մտածողության տեսակները կարող են տարբերակվել և նկարագրվել:
- Ամեն ոք կարող է հայտնաբերվել և զարգացնել իր մտածողության բազմազանությունը:
- Մտածողության մի տեսակի օգտագործումը կարող է խթանել այլ տեսակների զարգացումը:
- Անձնական փորձն ու նպատակասլաց աշխատանքը կարող են զարգացնել անձի մտածողության ամբողջ տարրապատկերը, այսինքն՝ աշխատացնել և զարգացնել «ԲՄ Արևը»:
- Մտածողության բազմազանությունն ավելի հումանիստական է դարձնում անձի ներուժը, նրա հնարավորություններն ու ընդունակությունները:

- Անձի զարգացման տեսությունն օրինաչափորեն հանգեցնում է բազմաբնույթ մտածողության տեսությանը:
- Մտածողության որևէ տեսակ հազվադեպ է առանձին հանդիպում:
- Որքան ավելի խորությամբ ենք ուսումնասիրում մարդու բազմաբնույթ մտածողությունը, այնքան ավելի է փոփոխվում այդ մտածողությունների տեսակների ցանկը:

ԲՄ-ն՝ որպես մարդուն հատուկ ընկալման բազմազանությունը հաշվի առնող ուսուցման տեխնոլոգիա

Սովորեցնելն արվեստ է: Արդյունավետ ուսուցանող ուսուցիչն ուսուցումը կազմակերպում է այնպես, որ միաժամանակ ձևավորվեն ուսման շարժառիթներ, և խթանվի աշակերտների ուսումնառությունը: Արդյունավետ կերպով ուսուցիչը քաջ գիտակցում է, որ աշակերտների վերաբերմունքն ուսման նկատմամբ և նրանց ակադեմիական աճը պայմանավորված են իր իսկ մասնագիտական կարողություններով, այսինքն՝ այն բանով, թե որքանով է ինքը կարողանում կազմակերպել ուսումնական աշխատանքը՝ հենվելով աշակերտների հետաքրքրությունների, հնարավորությունների, օժտվածությունների և կարիքների վրա: Ուսումը դյուրին ու արդյունավետ դարձնելու համար պետք է կարողանալ ոչ միայ որոշակի գիտելիքների գումար հաղորդել, այլև «սովորել սովորեցնել»՝ տարբեր եղանակներով խթանելով նրանց մտածելու բազմաբնույթ կարողությունները, հենվելով ներքին կարողությունների ու հնարավորությունների, փորձի ու գիտելիքների վրա:

ԲՄ-ի տեսության կիրառումը դասարանում ենթադրում է, որ ուսուցիչը ոչ միայն պատմում, բացատրում է դասը, այլև երեխաներին հարցեր ուղղում, օգտագործում զննական նյութեր, երաժշտություն՝ մատուցվող նյութն ավելի ընկալելի դարձնելու համար: Նա աշակերտներին հանձնարարում է՝ պատրաստել շոշափելի իրեր, որպեսզի բացահայտի, թե որքանով են նրանք հասկացել նյութը, ճշտի նրանց ընկալման մակարդակը, յուրացման ձևն ու պատճառը:

ԲՄ-ի տեսությամբ աշխատող ուսուցիչը դասարանում կազմակերպում է նաև աշակերտների համատեղ գործունեությունն ապահովող բազմապիսի աշխատանքներ (զույգերով, փոքր կամ մեծ խմբերով), դասի ընթացքում ժամանակ է հատկացնում հարցադրումներին նպաստող աշխատանքներին:

Գարդների կողմից առաջարկված մտածողության 7 ձևերից առաջին չորսը՝ լեզվական-խոսքային, տրամաբանական-մաթեմատիկական, տարածական-տեսողական և երաժշտական, այս կամ այն չափով ընդգրկված են ավանդական ուսուցման մոտեցումներում: Գարդների առաջարկած հինգերորդ մտածողությունը՝ մարմնաշարժողականը, հավանաբար ամենաանսովորն է մեզ համար, քանի որ այն ավելի շատ ընկալվում է որպես սոսկ մարմնամարզական, ֆիզիկական խնդիր և դասարանում կիրառվոիմ իբրև մկանային վարժանք (ֆիզկուլտ-դադար, ֆիզիկական դաստիարակության դասեր): Սակայն այսօր արդեն հայտնի է, որ մարմնի շարժումն ունի ոչ միայն վերը նշված, այլև իմաստային գործառույթներ: Այն դրանով իսկ կարող է օգնել սովորողներին ավելի ավելի լավ ընկալել նյութի իմաստը և նպաստել խոսքի ու մտքի զարգացմանը: Օրինակ՝ մատների վարժությունների կատարումը խթանում է բանավոր խոսքը, երեխաները սովորում են լսել և հասկանալ խոսքի իմաստը: Ակտիվանում է նրանց խոսքը: Մատների վարժությունները նպաստում են ձեռքերի մկանների և մատների ֆալանգների զարգացմանը: Մատները ձեռք են բերում ճկունություն: Դա էլ իր հերթին հեշտացնում է գրավոր աշխատանքների կատարումը: Մատների վարժությունների շնորհիվ երեխաները սովորում են

կենտրոնացնել իրենց ուշադրությունը, զարգացնում են հիշողությունը: Խթանում է երեխաների մտածողության զարգացումը, զարգացնում երևակայությունը, նպաստում մաթեմատիկական-տրամաբանական մտածողության զարգացմանը: Մատների վարժությունները հաճախ կիրառվում է 1-ին դասարանում:

Մտածողությունների վերջին խումբը (միջանձնային և ներանձնային) Գարդներն անվանում է «անձնային մտածողություններ:

2. ԲՄ-ի առավելությունները և կիրառումը տարրական դպրոցում

Յուրաքանչյուր դաս իրենից ներկայացնում է ստեղծագործական գործընթաց: Դասը տևողությամբ մեծ ժամանակ չի ընդգրկում, սակայն այդ կարճ ժամանակահատվածում կրթադաստիարակչական և զարգացնող բազմակողմանի ու արդյունավետ աշխատանք պետք է կատարել:

Մակարենկոն գրում էր, որ դաստիարակության համար ոչ թե շատ ժամանակ է պետք, այլ ժամանկի խելացի օգտագործում: Նույնը կարելի է ասել նաև ուսուցման մասին, որի հիմնական նպատակը դասն է, դրա ամեն մի րոպեն մտածված ու արդյունավետ պետք է օգտագործել:

Տարրական դասարաններում որպես տեղեկատվության աղբյուրներ համեմատաբար շատ պետք է օգտագործել առարկայակերպարային զննական միջոցներ՝ բնական առարկաներ, նկարներ, ծավալային նշումներ և այլն: Առաջին դասարանի աշակերտները սովոր չեն միևնույն ուղղությամբ կայուն մտավոր գործունեության: Հարկավոր է անընդհատ փոխել երեխայի զբաղմունքը, որ նա և' կարդա, և' երգի, և' հաշվի, և' խաղա: ԵՎ դրա համար անհրաժեշտ է անընդհատ կիրառել բազմաբնույթ մտածողության ձևերը, քանի որ այդպես հաշվի է առնվում երեխաների տարբեր առանձնահատկություններ:

Դիտարկենք ԲՄ-ի տեսության հիմնական դրույթները՝ կիրառական տեսակետից.

- սովորելիս մենք աշխատեցնում ենք մեր բոլոր յոթ «մտածողությունները»
- մտածողության բոլոր ձևերը և տեսակները հավասարապես արժեքավոր և անհրաժեշտ են մարդու համակողմանի զարգացման համար
- մտածողության բոլոր ձևերը և տեսակները ուսումնական գործընթացում կարող են հղկվել և զարգանալ
- այն դպրոցներում, ուր ուսուցումը հիմնականում կառուցվում է մտածողության լեզվական, զննական և տրամաբանական-մաթեմատիկական տեսակների հիման վրա, բոլոր աշակերտները չեն կարողանում արդյունավետորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում
- յուրաքանչյուր աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում իր ուրույն ճանապարհով, իր սեփական ձևով, եղանակով և անձնական շարժառիթներից ելնելով
- մտածողության առավել զարգացած տեսակները կարող են օգտագործվել երեխայի մտածողության՝ բնականից ավելի թույլ տեսակները զարգացնելու համար

- մտածողության ուժեղ կողմերը կարող են ներկայացվել բազմապիսի եղանակներով
- գնահատվում է մարդուն ոչ թե «Ինչքա՞ն է նա խելոք», այլ՝ «Ինչո՞վ է նա խելոք»

չափանիշով: Այսպիսով, ԲՄ-ն կարել է ընկալել որպես ուսուցման տեխնոլոգիայի հիմք, որն ընձեռում է մի շարք առավելություններ՝ և՛ աշակերտներին, և՛ ուսուցիչներին, և՛ դպրոցի ղեկավարությանը:

ԲՄ տեսության առավելությունները

- Ամեն ոք կարողանում է յուրացնել ուսումնական նյութը՝ իր համար առավել հարմար եղանակով:
- Հիմնվելով սովորողների մտածողության բնածին առավել զարգացած ձևերի վրա՝ խթանում է երեխաների օժտվածության զարգացումը, նպաստում մասնագիտական կողմնորոշմանը,ինչը միշտ էլ համարվում է մանկավարժության գերնպատակ:
- Հնարավորություն է ընձեռում զարգացնել նաև երեխայի մտածողության այլ տեսակներ, ինչը, բնականաբար, նպաստում է աշակերտների համակողմանի զարգացմանը:
- Թույլ է տալիս հաղորդվող գիտելիքը դիտարկել ոչ միայն մեկ՝ առավել ընդունված տեսանկյունից, այլ ապահովում է նույն երևույթի բազմակողմանի լուսաբանումը: Այն ստեղծում է հաղորդվող նյութը տարբեր տեսանկյուններից դիտարկելու հնարավորություն, ինչն էլ ապահովում է ուսուցման արդյունավետության բարձրացումը:
- Յուրացված գիտելիքները դառնում են ավելի գործնական և կյանքի տարբեր ոլորտներում առավել կիրառելի. զարգացնում է երեխայի գործնական կարողությունները:
- Նպաստում է միջանձնային շփմանը, հաղորդակցման ձևերի յուրացմանն ու կիրառման կարողությունների և հմտությունների ձևավորմանը. սերմանում է հարգանք ուրիշի կարծիքի նկատմամբ, ձեռք են բերվում մտքերի փոխանակման և բանավիճելու կարողություններ ու փորձ:
- Ապահովում է մտքերի փոխանակման հնարավորություն և նպաստում համագործակցված որոնումների և ուսումնական աշխատանքի կատարմանը:
- Նպաստում է սովորողների ներքին հնարավորությունների և մտավոր կարողությունների բացահայտմանն և ուսումնական աշխատանքի կատարմանը:

Այսպիսով, ուսուցման այս ձևը կարելի է ընկալել որպես մարդու հնարավորություններն ի մի բերող, նրա անհատականությունն ամբողջացնող և ակտիվացնող մի տեսություն, որի կիրառումն ուսուցման գործընթացում նպաստում է սովորողների բոլոր հնարավորությունների բացահայտմանն ու զարգացմանը:

Նպատակահարմար է իրականացնել խմբային աշխատանքներ, որտեղ առավել կիրառվում է ԲՄ-տարբեր ձևեր: Հավելված 1-ում ներկայացված է մաթեմատիկայից «Տրամաբանական հարցեր և խնդիրներ» թեմայով օրինակելի դաս, որտեղ կիրառվել է ԲՄ-ի

տարբեր ձևեր: Իսկ հավելված 2-ում մայրենի առարկայից օրինակելի դաս՝ «Արվեստի տեսակները» թեմայով:

ԲՄ-ի տեսությունը սովորողների ատեղծագործական մտածողության խթանման մեծ հնարավորություններ է ընձեռում:

Աշակերտի համար ԲՄ-ի ուսուցման առավելություններն են

- ուսուցման դրական մթնոլորտը, որը նպաստում, խթանում ու ապահովում է ուսումնական աշխատանքի արդյունավետությունը և՝ աշակերտների, և՝ ուսուցիչների համար
- արժևորվում է երեխաների անհատական առանձնահատկությունները, հոգում դրանց մասին, պահպանում և զարգացնում
- բարեփոխում և ընդլայնում է դասավանդման տարբեր ձևերի կիրառման և արդյունքների
- կատարելագործվում և ընդլայնում է ուսուցման ուսուցման եղանակների ու մեթոդների բազմազանությունը
- ուսուցումը դարձնում է առավել ստեղծագործական, մատչելի և ապահովում է միջառարկայական կապերը
- արձանագրում է աշակերտների ակադեմիական առաջադիմությունը, նրանց մտածելու, հարցեր, խնդիրներ լուծելու և ուսուցանվող նյութը մտապահելու կարողությունները
- մեծացնում է աշակերտների ինքնավստահությունը մտածողության բազմազան ձևերի կիրառմամբ սովորելիս
- սովորողներին ավելի արդյունավետորեն է նախապատրաստում 21-րդ դարում ապրելու, աշխատելու և շարունակական ուսամնառությունը՝ ամբողջ կյանքի ընթացքում սովորելու համար
- բոլորի համար ստեղծում է սովորելու հավասար պայմաններ
- ուսումնառության ընթացքում սովորողի որոշ հաջողություններ ընկալում է ոչ թե որպես ընդհանրապես սովորելու անկարողություն, այլ՝ որպես նրան հատուկ մտածողության առանձնահատկության դրսևորում
- կենտրոնանում է սովորողի այն կարողությունների և գիտելիքների վրա, որոնք ցանկացած ուսումնական ծրագրերի իրականացման պարտադիր արդյունքը պետք է լինեն
- ապահովում է սովորողի անհատական և հասարակական զարգացումը՝ որպես կրթության բովանդակության պարտադիր մաս:

ԲՄ-ի ուսոցման առավելություններն ուսուցիչների և դպրոցի ղեկավարների համար

- Նպաստում է դպրոցում դրական մթնոլորտի ստեղծմանը, ինչը խթանում է և՛ աշակերտական, և՛ մանկավարժական կոլեկտիվի արդյունավետ աշխատանքը
- բարելավում և ընդլայնում է ուսուցման ռազմավարությունների ցանկը

- ապահովում է ուսուցման ընթացքում տարբեր մոտեցումների կիրառումը՝ բարձրացնելով ուսման արդյունավետությունը
- նպաստում է ցանկացած ուսումնական ծրագրի նպատակների առավել ամբողջական իրագործմանը
- ամրացնում է ուսուցիչ-ծնող կապը
- նպաստում է մանկավարժական կոլեկտիվի մասնագիտական զարգացմանը՝ ներառյալ նոր մասնագիտական տեսությունների, մոտեցումների, հասկացությունների ըմբռնումն ու կիրառումը
- նպաստում է համադպրոցական որոշումների մակարդակի բարձրացմանը
- թարմացնում է ուսուցիչների մասնագիտական ինքնազգացումը:

Եզրակացություն

Ուսումնասիրելով հոգեբանամանկավարժական գրականությունը, կարելի է գալ հետևյալ եզրակացությունների՝

- ✓ ԲՄ տեսությունը ձևավորվել է 20-րդ դարում Հովարդ Գարդների կողմից:
- ✓ Ըստ Գարդների՝ մտածողության հիմնական ձևերը 7-ն են՝ լեզվական, տրամաբանական, տեսողական, մարմնաշարժողական, երաժշտական, միջանձնային, ներանձնային:
- ✓ ԲՄ ձևերը չի սահմանափակվում այս 7-ով, այն կարող է հասնել 700-ի:
- ✓ Որպիսի ուսուցման գործընթացը լինի արդյունավետ, անհրաժեշտ է կիրառել բազմաբնույթ մտածողության ձևերը:
- ✓ ԲՄ ապահովում է աշակերտի, ուսուցիչների և դպրոցի համար մեծ առավելություններ:
- ✓ ԲՄ տեսությունը ոչ թե նպատակ է, այլ գործիք՝ այդ նպատակին հասնելու համար:

Այսպիսով, բազմաբնույթ մտածողության տեսությունը կարելի է ընկալել որպես մարդու հնարավորություններն ի մի բերող, նրա անհատականությունն ամբողջացնող և ակտիվացնող մի տեսություն, որի կիրառումը ուսուցման գործընթացում նպաստում է սովորողների բոլոր հնարավորությունների բացահայտմանն ու զարգացմանը: Այդ իսկ պատճառով առաջարկում եմ յուրաքանչյուր դաս այնպես պլանավորել, որ հնարավորինս շատ մտածողության ձևեր իր մեջ ընդգրկի:

Օգտագործված գրականության ցանկ

- ✓ «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում», հեղինակ Մ. Աստվածատրյան, Ս. Վարդումյան և ուրիշներ, Երևան 2001
- ✓ «Ինտեգրված թեմատիկ միավորներ», Հեղինակ Մ. Աստվածատրյան, Ս. Վարդումյան, Ի. Օհանովա, Ռ. Պետրոսյան, Լ. Երեմյան, Երևան 2007
- ✓ «Նոր մոտեցումներ ուսուցիչների պարտասրտման գործընթացին», Հեղինակ Ս. Վարդումյան, Լ. Ստրուցենկա, Ռ. Պետրոսյան, Գ. Հարությունյան, Ն. Մարկոսյան, Ֆ. Երիցյան, Գ. Սիմոնյան, Ի. Եղինյան, Երևան 2004
- ✓ «ՈՒսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը», Հեղինակ Մ. Աստվածատրյան, Ա. Արնաուդյան, Ի. Օհանովա, Ս. Վարդումյան., Ռ.Պետրոսյան, Լ. Երեմյան, Երևան 2007
- ✓ www.academia.edu/36282628/ԹեմաԲազմաբնույթ_մտածողության_տեսությունը

Հավելված 1

Օրինակելի դաս 9.11.2022

Առարկա-Մաթեմատիկա

Դասի թեման- Դասընթացավարման հասկացություն և հմտություններ: 525

Դասի նպատակը 1. Ծանոթացնել երեխաների ստանդարտությունը, 2.հետաքրքրությունն և սեր առաջացնել մաթեմատիկայի նկատմամբ, 3.թարգմանել ուսմատերիան միջոցով մեկնաբանել աշակերտների մոտ պատասխանատվության և հանդուրժողականության, ինչպես նաև ունկնդրի հարգելը սեփական 4. գնահատում փոխադարձ հարգանքի, 4. դասախոսություն հարցնելու

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԱՍ

Դասարանը նախապես մեծավոր մի մաթեմատիկական խաղերով, հանրագիտակ պատմվածքով, գրքերով: Դասարանը հանդես բաժանված մի նոր հուշ, որոնք տարբերվում հունց հաղորդում և սենյակ տեսնենք:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Դասը սկսել «մաթեմատիկա» առարկայի մասին հնագույնից մասին ներկայացնում

ԻՄԱՍՏԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՓՈՒԼ

Էկրանին ցուցադրվում է երկրաչափական պատկերներ, թիմերից ուրաքանչյուրը ընտրում է տվյալ պատկերը և ուսուցչուհին ընթերցում է հարցը:

Մինչև հարցի պատասխանի մասին մտածելը, կարող է աշակերտներին ուղղել հստակաց հարցերը.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Այս փուլում ամփոփել արդյունքները, հարցող թիմին պարգևատրել պատվոգրով: Ինչպես նաև քանի որ աշխատում քնարգրանվել են, բոլոր աշակերտներին հիշեցնել մաթեմատիկայի թեստերի մասին: Այս ամենը կարելի է կազմակերպել երաժշտության ներքո:

Հավելված 2

Օրինակելի դաս 24.03.2023թ.

Առարկա՝ Մայրենի (Ի/Ը)

Դասարան՝ 4-րդ

Դասի թեման՝ Արվեստի տեսակները: ՏՀՏ

Դասի նպատակը՝ ներկայացնել արվեստի տեսակները, 2. ուսումնասիրել և ի ցույց դնել արվեստագետների կյանքը և ստեղծագործությունները, 3. զարգացնել կյանքը դիրք բարգավաճուն մարդու կյանքում, 4. Ձևավորել բանավոր խոսք:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Աշակերտներից մեկը ներկայացնի դասի թեման և հարց առաջադրի.

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում արվեստը...

- Մենք գիտում ենք կոտրվեր և պակասեցներ, շատ գիմնիսներ, կարդում ենք հեքիաթներ ու պատմվածքներ. կանգ ենք առնում հոյակապ շենքերի առջև. հետևում ենք պարողների շարժումներին, ընկալում ենք թատերական ներկայացումներ ու կինոֆիլմեր: Եվ այդ շատ տարբեր, անհամեմատելի թվացող երևույթները կշռում են մեկ բառով արվեստ: Արևակը և մեղեդին, նկարը և հեքիաթը, պարն ու կինոֆիլմը արվեստի տարբեր տեսակների առանձնահատկություններ են...
- Արվեստը հուզարակության գիտակցության մեջերից մեկն է: Արվեստը օգնում է ճանաչել աշխարհը, մեռնելում մարդկանց հոգեոր նկարագիրը, կյանքը գեղեցկացնելը, դաստիարակում մարդուն, ընդլայնում մտածողությունը, զարգացնում ստեղծագործական ընդունակությունները:
- Ինչպես ասում է Միհրան Ամիրխանյանը. «Արվեստը մեզ շրջապատող ամբ ու կերպերի պատասխանը պետք է լինի»:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

Դասարանը հանդես բաժանված լինի 5 խմբերի՝ գրականություն. քանդակագործություն/ճարտարապետություն. երաժշտություն. կերպարվեստ և կինո/թատրոն: Ուրախանալով խումբ ներկայացնի ավելի արվեստի տեսակը. կատարված գործնական աշխատանքը, ինչպես նաև արվեստագետների կյանքն ու ստեղծագործությունները:

ԿԵՌԱՎԱՍՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Այսօրվա մեր գեղեցիկ դասը մոտեցավ իր ավարտին. ուզում ենք շնորհակալություն հայտնել ինքնության ընթերցանության դասագրքին և խոսել այն մասին, թե ինչ իմացանք ուսումնասիրելով այս դասերը: